ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն N 444-Ա

28 օգոստոսի 2024թ.
ք. Իջևան

ԱՐԱՐԱՏ ՍՈՒՐԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1.Արարատ Սուրենի Գասպարյանին 2024 թվականի օգոստոսի 28-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 100-30.3-Մ2-6) ժամանակավոր թափուր պաշտոնում մինչև հիմքի վերացումը և կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2.<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ մասնագիտական պաշտոնների 2-րդ ենթախմբի սանդղակի 1-ին մակարդակի գործակցի /3.21/ կիրառմամբ՝ 267.072 / երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ դրամ:

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

28.08.2024

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում տրվել է հայտարարություն մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին:

Սահմանված ժամկետում դիմել է 2 հավակնորդ՝

1.Արարատ Սուրենի Գասպարյանը

2.Արսեն Վազգենի Չուխուրյանը

Դիմորդների փաստաթղթերի և ինքնակենսագրականների ուսումնասիրության արդյունքում Արարատ Գասպարյանի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ